ՎԱՐԱԶԴԱՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Մարտի 20-ին կյանքից հեռացավ նշանավոր գիտնական, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ճարտարապետության դոկտոր, պրոֆեսոր, վաստակավոր մանկավարժ, ականավոր հասարակական գործիչ Վարազդատ Հարությունյանը:

Վ. Հարությունյանը ծնվել է 1909 թ. Վան քաղաքի Այգեստանների Խաչփողան թաղամասում: 1916 թ. տարագրության ճանապարհներով հասել է Էջմիածին, հետո՝ Թիֆլիս, որտեղ և ստացել է նախնական կրթությունը: 1927–1930 թթ. եղել է Լոռվա Շնող գյուղի դպրոցի ուսուցիչ: 1931–1937 թթ. սովորել և ավարտել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի ճարտարապետության բաժինը: Աշխատելով ճարտարապետության ամբիոնում, միաժամանակ կատարելագործվել է հնագիտության մեջ և մասնակցել Դվինի պեղումներին, որի ճարտարապետական մեկնաբանությունը դարձել է նրա թեկնածուական թեզը: 1946 թ. պաշտպանելով ատենախոսությունը՝ նա նվաճել է ճարտարապետության գծով Հայաստանի առաջին գիտության թեկնածուի աստիճանը, իսկ 1964 թ.՝ հայկական քաղաքաշինության պատմության թեմայով՝ ճարտարապետության դոկտորի աստիճան ու պրոֆեսորի կոչում:

50 տարուց ավելի ղեկավարելով Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի ճարտարապետության ամբիոնը, Վ. Հարությունյանը դաստիարակել է ճարտարապետների բազում սերունդներ, մասնագիտականորեն կատարելագործել դասավանդման ծրագրերը, ղեկավարել 2 տասնյակից ավելի թեկնածուներ և գիտության դոկտորներ: Նրա գրչով հրատարակվել են երեք մնայուն դասագրքեր՝ «Հին աշխարհի ճարտարապետություն», «Հայկական ճարտարապետության պատմություն» կոթողային գործը և «Ճարտարապետական հուշարձանների վերականգնում» (հեղինակային կազմում):

Վ. Հարությունյանի գիտական և ստեղծագործական վաստակը համապատասխանում է հայագիտական մասշտաբներին: Տարբեր լեզուներով հրապարակել է 800-ից ավելի հայկական ճարտարապետության ուսումնասիրությանը նվիրված հոդվածներ: Կարևոր ներդրում են գիտության մեջ նրա շուրջ 40 գրքերը, որոնց թեմատիկան հայկական և համաշխարհային ճարտարապետության

խնդիրներն են: Վերոհիշյալ դասագրքերի կողքին առանձնապես կարևորվում են եկեղեցական ու աշխարհիկ ճարտարապետության ուսումնասիրությունները, ինչպես և հայ ճարտարապետության երախտավորների ստեղծագործական վաստակի հետազոտությունները: Ժամանակն արտացոլող ուժ ունեն նրա վերջին տարիների հրապարակած մեմուարները, համաշխարհային կոթողների այցելություններին վերաբերող նյութերը և այլն: Նշվածներում արտացոլված են Վ. Հարությունյանի մասնագիտական հայացքները և հայկական ճարտարապետության ուսումնասիրության նորամույծ մի շարք տեսությունները:

Մեծ է Վ. Հարությունյանի լուման և հայրենիք-սփյուռք կապի իրականացման հասարակական գործունեության մեջ, նա ունեցել է միջազգային կապեր՝ ի նպաստ հայագիտության, Հայկական հարցի և ճարտարապետության ծանոթացման: 12 տարիներ ղեկավարել է Հայաստանի ճարտարապետների միությունը, մեծ ներդրում է ունեցել Սփյուռքահայության հետ մշակութային կապերի կոմիտեում, «Գիտելիք» ընկերությունում, Հուշարձանների պահպանության կոմիտեում, մինչև վախճանը եղել է Հուշարձանների պահպանության հայկական ընկերության նախագահ, հիմնադիրներից և պատվո նախագահ է Հայաստանի «Վասպուրական» հայրենակցական միության: Մեծ է նրա ներդրումը նաև հայոց կաթողիկոս՝ գահակալների ծառայությունում. 1956 թ. նախագահել է Մայր աթոռ Ս. Էջմիածնի ճարտարապետական հանձնաժողովը՝ ծառայելով գրչով և հուշարձանների վերականգնման խորհրդատվությամբ: Մայր աթոռի գործունեության վերջին տասնամյակների ժամանակագրություններ են նրա կողմից հրապարակված «Եկայք շինեսցուք», «Ծառայություն Էջմիածնի գահակալներին» գրքերը:

Բնական է, նման գործունեությունը հայրենիքում և սփյուռքում մեծ պատիվ և հարգանք բերեց հեղինակին: Լայն ճանաչման կողքին Վ. Հարությունյանը 30-ից ավելի հայկական և միջազգային պատվո անդամությունների, կոչումների, մրցանակների, շքանշանների դափնեկիր-ասպետ է, ճարտարապետության միջազգային ակադեմիայի մոսկովյան մասնաճյուղի պատվավոր անդամ, Թորոս Թորամանյանի հայկական ճարտարապետության բարձրագույն ակադեմիական մրցանակի դափնեկիր, Ալ. Թամանյանի և «Վասպուրական» հայրենակցական միության ոսկե մեդալների շքանշանակիր, արվեստի վաստակավոր գործիչ, Երևանի պատվավոր քաղաքացի:

Մեծ գիտնականի և նվիրյալ հայրենասերի հիշատակն ու նրա նկատմամբ խոր հարգանքը ընդմիշտ կպահպանվեն ոչ միայն այն մարդկանց սրտերում, ովքեր ճանաչում էին իրեն, այլև հայկական ճարտարապետության բոլոր այն հետազոտողների, ովքեր ուսումնասիրելու են նրա ստեղծագործական ժառանգությունը:

Կառավարական հանձնաժողով